ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2018 թվականի N 410-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի թիվ 498 և 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումների պահանջով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ադելաիդա Համայակի Եզեկյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0339-0042 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում 30,0 քառ.մետր մակերեսով տնտեսական շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հոկտեմբերի 2018 թվականի N 411-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԹԻՎ 125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 10-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 125-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1)որոշման 1-ին և 2-րդ կետերում «Ստյոպա Հրաչիկի Ղազարյանին» բառերից հետո լրացնել «և Հրաչյա Ստյոպայի Ղազարյանին» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հոկտեմբերի 2018 թվականի N 412-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Ջրվեժի համայնքապետարանին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի ջրագծերի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-18/33» գնման պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հոկտեմբերի 2018 թվականի N 413-Ա

## ԱԼԲԵՐՏ ԲԵԳԼԱՐԻ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 9-Ա որոշումը, համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեի տան բնակիչ Ալբերտ Բեգլարի Գալուստյանի ընտանիքի վերաբերյալ և այն, որ հոկտեմբերի 8-ին այրվել է ընտանիքին պատկանող ավտոտնակի տանիքը՝ պատճառելով մեծ չափի վնաս, որից ելնելով Ալբերտ Բեգլարի Գալուստյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ալբերտ Բեգլարի Գալուստյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հոկտեմբերի 2018 թվականի N 414-Ա

## ԱՐՄԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 9-Ա որոշումը և համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 10 հասցեի բնակիչ Արմեն Վաղարշակի Թովմասյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 7 անձից, ինքը՝ Արմեն Վաղարշակի Թովմասյանը՝ ծնված 1982 թվականին և եղբայրը՝ Անդրանիկ Վաղարշակի Թովմասյանը, ծնված 1990 թվականին, ներկայումս աշխատում են շինարարությունում, որպես բանվոր, հայրը՝ Վաղարշակ Ռաշիդի Թովմասյանը, ծնված 1956 թվականին, 1-ին կարգի հաշմանդամ է, գտնվում է անկողնային վիճակում, մայրը՝ Աղավնի Սերյոժի Գասպարյանը, ծնված 1957 թվականին և կինը՝ Սվետլանա Սահակի Հովհաննիսյանը, ծնված 1981 թվականին, չեն աշխատում, նրանց խնամքի տակ են 2 անչափահաս երեխաները՝ ծնված 2008 և 2011 թվականներին և ելնելով ընտանիքի սոցիալական վիճակից Արմեն Վաղարշակի Թովմասյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Արմեն Վաղարշակի Թովմասյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հոկտեմբերի 2018 թվականի N 415-Ա

## ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ ՍԱՐՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Հայկ Լևոնի Սարոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից համաձայն իր դիմումի՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից:

2. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ վճարումն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի N 416-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նառա Վլադիմիրի Դավթյանին տալ երկհարկանի բնակելի տան և օժանդակ շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 4 տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Նառա Վլադիմիրի Դավթյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի N 417-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մխիթար Սուրիկի Սարգսյանի (ծնված՝ 1962 թվականի հունվարի 19-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող (հիմք՝ առուվաճառքի պայմանագիր, կնքված 2018 թվականի հոկտեմբերի 04-ին) Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի թիվ 07-042-0401-0016 կադաստրային ծածկագրով հողակտորից 0,9438 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողն ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգու փոխադրելու մասին (հիմք՝ «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 03-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Մխիթար Սուրիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 0,9438 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ վարելահողը, փոխադրել այգու:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման առաջին կետում նշված գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքն ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու նկատմամբ և պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի N 418-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սերգեյ Հրաչի Ներսիսյանի (ծնված՝ 1985 թվականի օգոստոսի 27-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի 6-րդ հատվածի թիվ 12 հասցեի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայական N 1082039, «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սերգեյ Հրաչի Ներսիսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի 6-րդ հատվածի թիվ 12 հասցեում 2005-2010 թվականներին ինքնակամ կառուցել է թվով 4 հանդիսությունների սրահ՝ համապատասխանաբար 23,29 քառ.մետր, 541,05 քառ.մետր, 452,88 քառ.մետր, 287,30 քառ.մետր, թվով 3 բաց պատշգամբներ՝ համապատասխանաբար 28,91 քառ.մետր, 29,61 քառ.մետր, 51,54 քառ.մետր, ծածկ՝ 19,28 քառ.մետր և աստիճանավանդակ՝ 17,56 քառ.մետր արտաքին մակերեսներով, ընդամենը՝ 1451,42 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 53-րդ կետերի և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սերգեյ Հրաչի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի 6-րդ հատվածի թիվ 12 հասցեի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Սերգեյ Հրաչի Ներսիսյանին և սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի 6-րդ հատվածի թիվ 12 հասցեի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական և գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 6/12:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 7 547 384 (յոթ միլլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Միրզկանյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի N 419-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ավետիք Վահանի Էվինյանի (ծնված՝ 1959 թվականի հունվարի 1-ին) և Էլիանորա Սերյոժայի Մամյանի (ծնված՝ 1960 թվականի հուլիսի 8-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայական N 2513337, առուվաճառքի պայմանագիր, կնքված 2018 թվականի հոկտեմբերի 04-ին) Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի թիվ 07-042-0401-0016 կադաստրային ծածկագրով հողակտորից 10,3811 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողն ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգու փոխադրելու մասին (հիմք՝ «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 03-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Ավետիք Վահանի Էվինյանին և Էլիանորա Սերյոժայի Մամյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 10,3811 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակությամբ հողատեսքը՝ վարելահողը, փոխադրել այգու:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման առաջին կետում նշված գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքն ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու նկատմամբ և պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2018 թվականի N 420-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Արամ Նիկոլի Նահապետյանի (ծնված՝ 1972 թվականի հոկտեմբերի 15-ին), Արմինե Նիկոլի Նահապետյանի (ծնված՝ 1976 թվականի փետրվարի 10-ին), Ռուզաննա Նիկոլի Նահապետյան (ծնված՝ 1973 թվականի նոյեմբերի 8-ին) և Շուշիկ Վահանի Ղազարյանի (ծնված՝ 1952 թվականի փետրվարի 17-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 10 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ բացված երեք պատուհանները և ավել օգտագործվող 7,6 քառ.մետր մակերեսով հողամասը (հիմք՝ Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2007 թվականի հուլիսի 7-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հոկտեմբերիի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արամ, Արմինե, Ռուզաննա Նահապետյանների և Շուշանիկ Ղազարյանի կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 2507,6 քառ. մետր՝ փաստաթղթերում ամրագրված 2500,0 քառ. մետր մակերեսի փոխարեն և սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում 1967-1992 թվականներին ինքնակամ կառուցել է բնակելի տուն՝ 169,0 քառ.մետր, ինքնակամ շինություններ 178,7 քառ.մետր, պարիսպ՝ 9,65 քառ.մ, բնակելի տուն՝ 58,3 քառ.մետր արտաքին մակերեսով և ինքնակամ բացել են երեք պատուհաններ:

Արամ, Արմինե, Ռուզաննա Նահապետյանների և Շուշանիկ Ղազարյանի կողմից ինքնակամ զբաղեցված հողակտորը համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ինչպես նաև հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում:

Արամ, Արմինե, Ռուզաննա Նահապետյանների և Շուշանիկ Ղազարյանի կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 10 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18, 22.1 կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Ճանաչել Արամ, Արմինե, Ռուզաննա Նահապետյանների և Շուշանիկ Ղազարյանի սեփականության իրավունքը իրենց կողմից փաստացի ավել օգտագործվող 7,6 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Արամ, Արմինե, Ռուզաննա Նահապետյաններին և Շուշանիկ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 10 այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված երեք պատուհանները համարել օրինական:

4.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 7 800 (յոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 27

գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2018 թվականի N 421-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վարդուհի Ռաֆիկի Ավագյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 9/1 հասցեի արդյունաբերական օբյեկտների հողամասում արտադրամասի կառուցման և հողամասի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 27
գ. Ջրվեժ